

ՇԻՐԱԿԻ ԴԱՇՏԱՎԱՅՐԻ ԲԱՐԲԱՐԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ս. 2. ԲԱՂԴԱՍԱՐՑԱՆ-ԹԱՓԱԼՑԱՆ

Արարատյան դաշտավայրից հետո՝ գրաված տարածությամբ և բնակչության խտությամբ, Շիրակը երկրորդն է մեր հանրապետությունում: Գտնվելով Հայաստանի հյուսիս-արևմտյան մասում, նա իր մեջ է առնում Մարալիկի (Անիի), Արթիկի, Ղուկասյանի, Ախուրյանի ու Ամասիայի շրջանները՝ հարյուր հրեաների հասնող դուրսերով, ավաններով: Շիրակը հայերեն բարբառների մի յուրահատուկ շտեմարան է: Զնայած դրան, բացառությամբ Կարնո բարբառի՝ մնացածները ուշադրության չեն արժանացել:

1951, 1966—1969 թթ. ընթացքում Շիրակի բարբառային ընդհանուր ուղանկարը տալու և դաշտավայրում տեղակայված բարբառները ուսումնասիրելու նպատակով եղել ենք բոլոր՝ 130-ի հասնող գյուղերում: Ստորև ներկայացնում ենք մեր ուսումնասիրության արդյունքների մի մասը:

Շիրակի դաշտավայրի բարբառների մի մասը բավականին անաղարտ է պահպանվել: Այստեղ կան Շիրակի, Կանի, Մշո բարբառներով Կարինի՝ Բասենի ենթաբարբառով խոսողներ: Ուշադրության արժանի է «Կը» ճյուղին՝ պատկանող և առ այսօր հայ բարբառագիտությանը անհայտ՝ Կանի բարբառը²: Հետաքրքրական է նաև բասենցիների խոսակցական լեզուն, որը Կարնո բարբառի ենթաբարբառն է:

Եթե խմբավորելու լինենք Շիրակի դաշտավայրի գյուղերը՝ ըստ բարբառային դիմանկարի, ապա կստանանք հետևյալ հիմնական խմբերը.

1. Գյուղեր, որտեղ խոսակցական լեզուն Շիրակի բարբառն ու նրա խոսվածքներն են. Հոռոմ, Հովտաշեն (Արթիկի շրջան):

2. Գյուղեր, որտեղ խոսում են Կարնո բարբառի՝ Բասենի ենթաբարբառով. Հառիճ, Նահապետավան (Արթիկի շրջան)³:

3. Գյուղեր, որտեղ բնակվում են Մուշից գաղթածներ և խոսում են Մշո բարբառով՝ որոշ դեպքերում լավ պահպանված, իսկ շատ դեպքերում էլ այլ բարբառների հետ ձուլված. Գեղանիստ, Լեոնակերտ (Արթիկի շրջան):

4. Գյուղեր, ուր բնակվում են Շիրակի բարբառի խոսվածքով և մի այլ՝ Մշո բարբառով, Բասենի ենթաբարբառով խոսողներ. Ղուկասյանի շրջանի Ղաղանչի գյուղը:

5. Գյուղեր, որոնց համար բնորոշը բազմաբարբառայնությունն է. մեծ մասամբ շրջկենտրոնները և, հատկապես, Մարալիկն ու Ղուկասյանը:

6. Նոր հիմնադրված բնակավայրեր, կայարաններ և կիսակայարաններ, որոնք խառնաբնակ են և որոնց բնակիչները խոսում են յուրաքանչյուրն իր

1 2. Մ. Կ ր տ չ յ ա ն, Կարնո բարբառը, Երևան, 1952:

2 Տեղացիների վկայությամբ կանցիներ կան նաև Թալինի շրջանի Փ. Արթիկ և Զարընչի գյուղերում: Լինելով այդ վայրերում, մենք Կանի բարբառով խոսողների չենք հանդիպել:

3 Բասենի ենթաբարբառով են խոսում նաև մեր հանրապետության Սպիտակի շրջանի Ղալաթի, Լուսաղբյուր, Նալբանդ, Թափալու և այլ գյուղերում:

ծննդավայրի բարբառով, խոսվածքով. այդ ամենի վրա իր կնիքն է դրել Շիրակի բարբառը:

Չնայած բազմերանգ բարբառային ուրվանկարին՝ այս դաշտավայրի համար ամենից բնորոշն ու տարածվածը «Ում» («Ըմ») ճյուղին պատկանող մի բարբառ է, որը կկոչենք «Շիրակի բարբառ» և որով խոսում են Արթիկի շրջանի Հոռոմ, Հովտաշեն, Հայկասար, Փ. Պարնի, Մեղրաշեն, Լուսակերտ, Գետափ. Արթիկ, Վարդաքար, Հայրենյաց, Գեղադիր, Սարալանջ, Սպանգարյան, Մարալիկի (Անիի) շրջանի Գուսանագյուղ, Իսահակյան, Աղին, Լուսաղբյուր, Սարակապ, Ձորաշեն, Հայկաձոր, Ղուկասյանի շրջանի Բաշգյուղ, Կարմրավան, Կրասար, Մեծ Սեպասար, Ձորաշեն, Գետիկ, Ցողամարգ գյուղերում:

Բացի վերոհիշյալ բնակավայրերից, որտեղ բացարձակապես իշխում է Շիրակի բարբառը, այդ բարբառով խոսողներ կան նաև դաշտավայրի բազմաթիվ այլ գյուղերում, որտեղ այս բարբառը գտնվում է այլ բարբառների միջավայրում:

Դաշտավայրի մյուս բարբառների ու խոսվածքների նկարագրությունը թողնելով այլ անգամվա, համառոտակի բնութագրենք Շիրակի բարբառը:

Շիրակի բնակիչների զգալի մասի խոսակցական լեզուն համարվել է Կարնո բարբառը⁴, որը պատկանում է «Կը» ճյուղին, այնինչ Շիրակի դաշտավայրի՝ վերոհիշյալ, ինչպես նաև բազմաթիվ այլ գյուղերի լեզուն Շիրակի բարբառն է, որտեղ անկատար դերբայը ձևավորվում է հիմնականում ըմ մասնիկով. որոշ գյուղերում առկա է և ռւմ-ը՝ համեմատաբար սակավ տարածմամբ. ըսըմ (ըսըմ եմ, ըսըմ ի), աշըմ (աշըմ եմ, աշըմ ի), բ'երըմ (բ'երըմ եմ, բ'երըմ ի), քէլըմ (քէլըմ եմ, քէլըմ ի):

Ճյուղային պատկանելությամբ տարբեր լինելով Կարնո բարբառից, Շիրակի բարբառը ընդհանրություններ ունի «Կը» ճյուղի այլ բարբառների, նաև Կարնո բարբառի հետ:

Այս առումով Շիրակի բարբառը միակը չէ. այդպիսին է և մեր լեզվի Բայազետի բարբառը, որը նույնպես «Ում» ճյուղին է պատկանում, բայց իր բազմաթիվ բնորոշ հատկանիշներով նույնանում է «Կը» ճյուղի բարբառների և հատկապես՝ Մշո բարբառի հետ:

Քանի որ խոսք եղավ Բայազետի բարբառի մասին, ապա համառոտակի բնութագրենք այն, նշելով այն բնորոշ հատկանիշները, որոնցով բնութագրվում է մեր ժողովրդի այդ հատվածի լեզուն: Ըստ հայ բարբառների ձևաբանական դասակարգման Բայազետի խոսակցական լեզուն պատկանում է հայ բարբառների «Ում» ճյուղին: Պրոֆ. Հր. Աճառյանը այն համարել է Երևանի (իմա՝ Արարատյան — Ս. Բ.) բարբառի ենթաբարբառներից մեկը⁵, իրոք, Բայազետի բարբառում անկատար դերբայը ձևավորվում է Ում դերբայական վերջավորությունով, որից և կազմվում են սահմանական եղանակի ժամանակները: Սակայն միայն ու միայն այսքանը, որովհետև մնացած բոլոր հատկանիշներով Բայազետի բարբառն առնչվում է «Կը» ճյուղի և հատկապես՝ Մշո բարբառի հետ: Բայազետի բարբառում վաղակատար դերբայն ունի է՞ր վերջավորությունը

4 Շիրակի բարբառով են խոսում նաև Հոկոտեմբերյանի ծայր հյուսիս-արևելքում, Արաքսի ափին գտնվող Բախշլար և Խերիբեկլու, ինչպես նաև Թալինի շրջանի Սուսեր, Զարընջի, Զիթհանթով, Փ. Արթիկ գյուղերում:

5 Հ. Մ. Մկրտչյան, Կարնո բարբառը, էջ 7:

6 Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 37:

(լրվացիւր, խաստըցեր, խասկըցեր և այլն): Հարակատար դերբայը վերջավորութիւնն է Ուկ մասնիկով (խաբուկ, խըմուկ, բացուկ, խիվընդցուկ), որոնք հանդիսանում են արեւմտյան, «Կը» ճյուղի բարբառներին չափազանց բնորոշ հատկանիշներ և բացակայում են Արարատյան բարբառում ու նրա բոլոր ճյուղավորումներում: Հոլովման համակարգով ևս Բայազետի բարբառն առնչվում է «Կը» ճյուղի և հատկապէս՝ Մշո, Սասունի, Վանի բարբառների հետ: Հակառակ Արարատյան բարբառում ու նրա բոլոր ճյուղավորումներում իշխող ի հոլովման. Բայազետում հատկանշականն ու հոլովումն է (Բայազէտու, Խէրեվնու, ծօլու, ջըրու, յցու, դիլու, մօղու, Խաւու, պապու, մամու, ճըժու և այլն): Ի տարրերութիւն Արարատյան բարբառի, բացառական հոլովն այստեղ ունի ևն վերջավորութիւններ (խարսնրսէն, խօքէն, տընէն, հացէն, ջըրէն, կընդանէն և այլն): Մշո, Վանի, Սասունի բարբառների նման, այս բարբառում ևս որոշակի հայցականն ունի զ(ըզ) նախդիրը, որը բոլորովին բացակայում է Արարատյան բարբառի ճյուղավորումներում: Բայազետի բարբառին հատուկ է կրկնակի, եռակի որոշիչ հոգի. կիրառութիւնը, որով նա տարբերվում է ոչ միայն Արարատյան, այլև՝ մեր լեզվի գրեթե բոլոր բարբառներից (գալում ա, ճիւնըն խանում ա թալիցըն, տանում ա, խաոսի խօր դըռանըն կապում ա): Բայազետի բարբառը հոգնակերտ մասնիկներով, բաղադրյալ հոգնակերտներով նույնպես տարբերվում է Արարատյանից: Նպատակից դուրս համարելով սույն հոգնակերտ մարդը յայտնաբերել Բայազետի բարբառը, նշենք մի երկու հատկանիշ էլ, որոնք ևս աներկբայելի կդարձնեն մեր այն հարցադրումը, որ Բայազետի բարբառը մի առանձին ու ինքնուրույն բարբառ է. այն չի կարող Արարատյան բարբառի ենթաբարբառը համարվել, որովհետև ընդհանրություններ չունի այդ, ինչպէս նաև «Ուկ» ճյուղի այլ բարբառների հետ:

Բայազետի բարբառն ունի քառաստիճան բաղաձայնական համակարգ. քառաստիճանութիւնն այստեղ չափազանց ընդգծված է. լայն տարածում ունի ձայնեղ հ-ն, հ-ի դիմաց ունի խ և այլն: Բայազետի բարբառը մեկընդմիջ տահմանազատվում է Արարատյան բարբառից և դեպի «Կը» ճյուղի վերահիշյալ բարբառներն է միտում նաև իր բառապաշարով:

Բայազետի ու Շիրակի բարբառների հանգամանալից ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ հայ բարբառների ձևաբանական դասակարգումն ու նրա համար որպէս հիմք ընդունված հատկանիշները, թեև բարբառագիտութեան արշալոյսին կատարել են իրենց անզուգական դերը, բայց այսօր, բարբառների ուսումնասիրութեան արդի էտապում որոշ շտկումների, վերանայումների կարիք են զգում, հենց թեկուզ այդ դասակարգման համար հիմք հանդիսացող հատկանիշների ավելացման ու ավելի բազմազան ու բազմաբնույթ դարձնելու տեսակետից. հակառակ դեպքում, ինչպէս տեսանք, միայն մեկ կամ երկու հատկանիշ հիմք ընդունելով և աչքաթող անելով տասնյակ այլ հատկանիշներ, այս կամ այն բարբառը կհամարվի ենթաբարբառ և կդասվի այն խմբում, որին, իրավամբ, չի պատկանում:

Բոլոր դեպքերում, անհրաժեշտ է հատկանիշների, այն էլ լեզվի բոլոր կողմերին ու կատեգորիաներին վերաբերող հատկանիշների կոմպլեքսի կիրառումը:

Շիրակի բարբառը, Կարնո բարբառի նման ունի քառաստիճան բաղաձայնական համակարգ: Գրաբարյան ձայնեղ պայթականներին բառասկզբում համապատասխանում են շնչեղ-ձայնեղ պայթականներ: Օրինակ.

$\text{P} > \text{P}'$ — բարձ > բ'առց, բառժ (Մ), բանալի > բ'ալնիք, բալնիկ (Մ), բարձ > բ'անցըր, բանժըր (Մ), բերդ > բ'եռթ, բեռտ (Մ), բերք > բ'երք, բերկ (Մ):

$\text{Գ} > \text{Գ}'$ — գաղափար > գ'աղափար, գ'աղապար (Մ), գէրէզմանոց > գ'էրէզմանոց, գ'էրէզմանոժ (Մ), գլխացաւանք > գ'լխացաւանք, գ'լխացաւանկ (Մ). գօգնոց > գ'օքնօց, գ'օկնօժ (Մ):

$\text{Դ} > \text{Դ}'$ — դեղին > դ'էղին, դժուար > դ'ըժար, դողալ > դ'օղալ, դրախտ > դ'ըրախտ:

$\text{Ձ} > \text{Ձ}'$ — ձէթ > ձ'էթ, ձ'էտ (Մ), ձիւթ > ձ'ուիթ, ձ'ուտ (Մ), ձուկն > ձ'ուկ:

$\text{Ջ} > \text{Ջ}'$ — ջնջել > ջ'ընջել, ջրաղաց > ջ'աղաչ, ց, ջ'աղաժ (Մ), ջարդել > ջ'առթել, ջ'առտել (Մ), ջուր > ջ'ուր:

Կարնո բարբառի համեմատութեամբ շնչեղացումը չափազանց ընդգծված և ուժեղ է Արթիկի շրջանում և հատկապես՝ Հոռոմ, Հովտաշեն, Վարդաքար, Հայրենյաց գյուղերում: Այն համեմատաբար թուլանում է Անիի և Ղուկասյանի գյուղերում:

Շնչեղացման ընդգծվածութեան հետ միասին, Արթիկի վերոհիշյալ և այլ գյուղերում խոսքն աչքի է ընկնում չափազանց ուժեղ շեշտվածութեամբ: Խոսում են լիաբերան, ծանր շեշտելով ամեն մի հնչյուն, մի բան, որ քիչ է ընդգացվում Շիրակի դաշտավայրի մյուս բնակավայրերում: Այդ հատկանիշը մեր շրջագայած մեկ և կես տասնյակ շրջաններից հատուկ է Ալավերդու խոսակցական լեզվին: Բարբառի, խոսվածքի ու այլ ճյուղավորումների այս հատկանիշը ստեղծում է շատ ուժեղ երանգ. բավական է ասել, որ Ալավերդու խոսակցական լեզուն ձևաբանական և մյուս տեսակետներից իրեն երկվորյակ հանդիսացող՝ Նոյեմբերյանի, Ստեփանավանի, Կիրովականի խոսվածքներից հենց այդ հատկանիշով էլ տարբերվում է:

Ի հակակշիռ Կարնո բարբառի, Շիրակի բարբառում, բառասկզբում չի նկատվում ձայնեղ պայթականների դիմաց՝ շնչեղ խուլերի առկայությունը, ինչպես՝ փէրել < բերել, քալ < գալ, թընել < ղնել և այլն:

Ձայնեղ պայթական հնչյունները չեն փոխվում և ռնգայիններից հետո: Այստեղ ձայնեղների դիմաց շնչեղ խուլեր կան ձայնավորներից և Բ ձայնորդից հետո: Բացառություն է կազմում Անիի շրջկենտրոնը՝ Մարալիկը, որտեղ Բ-ից և ձայնավոր հնչյուններից հետո ձայնեղների փոխարեն առկա են խուլ պայթականներ: Հնչյունափոխական այս երևույթը հատուկ չէ հայերենի բարբառներին, որոնցում շնչեղ խուլ պայթականների խումբը հիմնականում մնում է անփոփոխ: Մեր կողմից այդ երևույթը նկատվել է մեկ էլ Մշո բարբառի՝ Ալաշկերտի խոսվածքում (գուցե և ենթաբարբառում). վոռա < որբ, օրտի < որգի, յէտում < երդումն (այլ բարբառներում՝ հիմնականում վօրթի, էրթում կամ օրթում և այլն):

Հնչյունաբանական այս հատկանիշներով ևս Շիրակի բարբառը տարբերվում է Կարնո բարբառից: Կարնո և Շիրակի բարբառների միջև եղած տարբերություններն (նաև նմանությունները) եզակի չեն, սակայն այստեղ մեր նպատակից դուրս է տալ դրանց մանրամասն ու լիակատար համեմատությունը՝ մանավանդ որ դրանք տարբեր ճյուղերի պատկանող բարբառներ են Կարինը՝ «Կը», Շիրակը՝ «Ում»:

Այսպես ուրեմն, Շիրակի բարբառում Բ, Գ, Դ, Ձ, Ջ-ն = Բ, Գ, Դ, Ձ, Ջ Մ-ից, Ն-ից հետո:

Բառամիջում. ամրար>ամրար, բամբակ>բամբակ, զանգակ>զանգակ, պանդատ>պանգադ, մանդադ>մանգադ, գերանգի>գէրընգի, քանդել>քանդել, թանձր>թանձր, խնձոր>խընձոր, բանջար>բանջար, ջնջել>ջընջել: Բառավերջում. եղունգն>ղունգ, ըղունգ (Մ), զանգ>զանգ, խանձ>խանձ, հունձ>հունձ, մունջ>մունջ, փունջ>փունջ, ականջ>յանգաջ և այլն:

Այս օրինաչափությունից կան մի քանի շեղումներ, երբ ձայնեղ պայթականները, ուղղաչափությունից հետո գտնվելով հանդերձ՝ հնչյունափոխվում են. ալսպես՝ բամբասանք>բամբասանք, բամպասանկ (Մ), անհամբեր>անհամփեր անհամպեր (Մ), բարկենգան>բարկենթան, բարկենտան (Մ) և այլն:

Բառամիջում Բ, Գ, Դ, Զ, Ը, Փ, Ք, Բ, Յ, Զ, իսկ Մ արալիկում՝ Պ, Կ, Տ, Ս, Ծ, Լ-ից հետո. արրենալ>հոսփել, հոսպել (Մ), գարբին>գարփին, գարպին (Մ), մարդարիտ>մարբըրիդ, մարկըրիդ (Մ), մարգարէ>մարբարէ, մարկարէ (Մ), բրդել>բըթել, բըրտել (Մ), ջարդել>ջառթել, շառտել (Մ), փորձանք>փորցանք, փործանկ (Մ), առաջին>առչի, նառճի (Մ). նույնը տեղի է ունենում և բառավերջում. որր>վոռփ, վոռպ (Մ), սուրբ>սուրփ, սուրպ (Մ), բերդ>լեդթ, բեոտ (Մ), լեարդ>լեռթ, լեոտ (Մ), բարձ>բառց, բառծ (Մ), փորձ>փորց, փործ (Մ), արջ>առչ, առճ (Մ), վերջ>վեռչ, վեռճ (Մ) և այլն:

Ձայնավորներից հետո. շաբաթ>շափաթ, շապատ (Մ), հոգի>հոքի, հոկի (Մ), տայդր>տեբըր, տեկըր (Մ), միջնեակ>միչնակ, միճնակ (Մ), ձագ>ձաք, ձտկ (Մ), մէջ>մէչ, մէճ (Մ), մարտդ>մաբաք, մարակ (Մ), ուրագ>ուրաք, ուրակ (Մ) և այլն:

Խուլ պայթականները բառասկզբում մնում են նույնը. բացառություն են կադմում բրդդոր<պխտոր, գոնգոձ<կոծիծ բառերը: Շիրակի բարբառին հատուկ է խուլ պայթական հնչյունների բացարձակ ընդգծված և օրինաչափ դարձած ձայնեղացումը բառամիջում և բառավերջում: Օրինակ. ապրանք>արրանք, աբրանկ (Մ), կուպըր>կուրրր, տապակել>տաբգել, կապ>կաբ, պապ>պար, գրկել>գըրգել, կարկատան>կարգըղան, մկրատ>մըգրադ, ածիկ>աճիդ, կոկ>կոդ, աւելուկ>ավիլուգ, ատել>ադել, դտանել>գըդնել, զատիկ>զադիգ, գորտ>գորդ, բրուտ>բըրրուդ, արմատ>արմադ, արծաթ>արձաթ, արծատ (Մ), լծել>լձել, լոյծ>լուձ, մեծ>մեծ, վենձ (Մ), կոճակ>կոջադ, կոճ>կոջ, մաճ>մաջ և այլն:

Խուլ պայթական հնչյունները, ինչպես այլ բարբառներում, այնպես ել այս բարբառում նույնն են մնում խուլ շփականներից հետո, ինչպես՝ աստուած>աստված, ոսպն>վոսպ, ոսկր>ոսկոռ, ոսկի>ոսկի և այլն:

Շնչեղ խուլ հնչյունները միշտ մնում են նույնը. բառամիջում և վերջում դրանց դիմաց խուլ պայթականներ կան միայն Անիի շրջկենտրոնում՝ Մարալիկում: Օրինակ. փայտ>փէտ, փառ(ք)>փառք, փառկ (Մ), փեթակ>փեթագ, փկտադ (Մ), եփել>էփել, էպել (Մ), գաղափար>գաղափար, գաղապար (Մ), լափ>լափ, լապ (Մ), քիթ>քիթ, քիտ (Մ), կնքել>կընքել, կընկել (Մ), ապրանք>ապրանք, ապրանկ (Մ), թաց>թաց, թած (Մ), թուփ>թուփ, թուպ (Մ), արթուն>զառթուն, դառտուն (Մ), թութ>թութ, թուտ (Մ), գցել>քըցել (նաև՝ թարել), քըծել (Մ), չափել>չափել, չապել (Մ), ոչխար>օչխար, օճխար (Մ), չամիչ>չամիչ, չամիձ (Մ). ինչքան բառում չ-ի դիմաց կա շ. մէր ախիզը, ախճիզ (Մ) իշքան (իշկան) ըսես լավըն է: չ-ի դիմաց շ կա նաև աշկ, աշք<աշք, մէշկ, մէշք<մէշք բառերում:

Շիրակի բարբառում «Կը» ճյուղի բարբառների նման շատ լայն տարածում ունի ձայնեղ ճ-ն: Ավելորդ շենք համարում նշել, որ այս հնչյունը, որը ավելանում է ձայնավորով՝ բացառապես Ի, Ու, Ա, է ձայնավորներով սկսվող բառերից առաջ բնորոշ է «Կը» ճյուղին և հատկապես այն բարբառներին, որոնք ունեն քառաստիճան բաղաձայնական համակարգ և որոնցում ձայնեղ պայթական հնչյունների շնչեղացումը ուժեղ է: Ինչպես ասացինք, այդ ձայնեղ ճ-ն կա և Շիրակի բարբառում. այդպես՝ Կանդաջ, Կամէն, Կէսօր, Կառչի, Կառու, Կարուն, Կառչ, Կարգ, Կիրգուն, Կէրգանք, Կո՛ւմ, Կնգեր, Կընգըրել, (Մարալիկում՝ Կառճի, Կէեկանկ):

Շիրակի բարբառը ձայնավոր հնչյունների արտասանությամբ չի տարբերվում գրական հայերենից: Բացառություն է կազմում ա ձայնավորը, որը արտասանվում է ավելի շեշտված, և արտասանության տեղով մի փոքր ավելի առաջ գալով՝ կենտրոնանում է բերանի խոռոչի միջին մասում: Այդ ավելի ընդգծվում է, երբ ա-ն հաջորդում է Բ՛, Գ՛, Դ՛, Ճ՛, Զ՛ ձայնեղ-շնչեղ պայթականներին:

Ի տարբերություն Կարնո բարբառի, Շիրակի բարբառը ունի երկբարբառային արտասանություն ունեցող ու>ուօ և է>յիէ հնչյունները, բայց չունի ա, օ, ու, վերին բարձրության ձայնավորները:

Ա ձայնավորը բառասկզբում մնում է նույնը՝ անկախ վանկերի քանակից. բացառություն են ասել>ըսել և անել>էնէլ բառերը:

Ինչպես այլուր, այնպես էլ Շիրակի բարբառում ա ձայնավորը չի փոփոխվում և աճ նախածանցում:

Ա ձայնավորը անփոփոխ է մնում երկվանկ բառերում: Բազմավանկ բառերում առկա է երկու վիճակ. նույն հնչյունական դիրքերում այն կամ սղվում է, կամ մնում անփոփոխ. այսպես, արժանի>արժանի, արարմունք>արարմունք, արարմունկ (Մ), ավազակ>ավազագ, զարմանալ>զարմանալ, զարդարանք>զարթարանք, զառտարանկ (Մ). բայց ամաչկոտ>ամչըկոդ, ամճըկոդ (Մ), արածել>արծալ, բաժանել>բ՛աժնել, բանալի>բ՛ալնիկ, բ՛ալնիկ (Մ), բաղանիք>բ՛աղնիք, բ՛աղնիկ (Մ), բ՛աղնիս, թաթախել>թաթխել, թատխել (Մ), գերանդի>գ՛էրնդի, պակասել>պակսել և այլն:

Ա ձայնավորը ընկնում է կամ նրա դիմաց Ը կա անալ, անել բայածանցներում. օրինակ՝ թանկանալ>թանգընալ, ելանել>ելնալ, ելնել, պագանել>պաքնել, պաքել, պակել (Մ) և այլն:

Ե-ի դիմաց միավանկ բառերի սկզբում կա յե, (յիէ) երկու և ավելի վանկ ունեցող բառերի սկզբում՝ է. բացառություն են կազմում յերգիր, յերգինք, յերկինկ (Մ) բառերը:

Ե-ի դիմաց ի կա իրգուն, իրեք բառերում:

Բառամիջում, շեշտի տակ ե-ն երկբարբառային արտասանություն ունի: Ի և Ը ձայնավորները անփոփոխ են մնում: Միայն ի-ի դիմաց Ը կա ինչու>հընչի, ընչի, իսկի>ըսկի բառերում, որն ընդհանուր է հայերենի բարբառների մեծ մասի համար:

Հիմնականում մնալով նույնը, Ու-ն սղվում է ուղարկել>դըրգել, Ու-ի դիմաց Ը կա ուղեղ>ըղեղ, ուխտել>ըխտել, ուխտաւոր>ըխտավոր, բուսանել>բըսնել բառերում:

Երկբարբառային ուօ արտասանությամբ Ո կա բառասկզբում՝ ոխ>վուօխ, ոսպն>վուօսպ և բառամիջում, շեշտի տակ՝ խոտ>խուօտ, կով>կուօվ, լոր>

լուսր և այլն: Ո հնչյունով սկսվող ով, որ բառերը բարբառում ունեն վեր. վեվ. վով ձևերը:

Գրաբարյան երկրաբառների դիմաց այստեղ ևս կան պարզ հնչյուններ՝ հայր>հէր, մայր>մէր, սայլ>սէլ, այս>էսի, գ, այն>էնի, գ, այդ>էդի, գ: ևա>է—սևամ>լէմ, ք, շէմկ (Մ), ցորևան>ցորէն:

ոյ>ու—լոյս>լուս, քոյր>քուր, սառոյց>սառուց, սառուծ (Մ):

իւ>ու—ծիւն>ծուն, ձիւթ>ձութ, ճուտ (Մ), արիւն>արուն:

Այս բարբառին հատուկ են բազմաթիւ հոգնակներն: Դրանցից տարածվածները եւ և ներ հոգնակներ մասնիկներն են, սակայն առկա են և էֆ, էրֆ, իֆ, դանֆ, տիֆ հավաքականությունն արտահայտող անֆ, ենֆ, ոնֆ և այլն: Գոյականների սեռական հոլովները ունենում են հետևյալ վերջավորությունները՝ ի (շամիւ-շամի), ու (հոգի-հոգու, ջուր-ջրու), ան (շուն-շան), վա (շափաթ-շափթվա), օր (հէր-հօր), օչ (քուր-քուրօչ): Հոգնակի սեռականը հիմնականում ունի ու վերջավորությունը. բացառություն են կազմում էֆ, տիֆ, անֆ մասնիկներով հոգնակի կազմող բառերը, որոնց սեռական հոլովները կունենան հետևյալ ձևերը. տըղէք-տըղօնց, տըղօց, կընգըտիք-կընգըտօնց, կընգըտօց և այլն: Տեղանունների սեռական հոլովը ունենում է ու վերջավորությունը. (Հոռոմ-Հոռոմու). կա նաև ա (Սօգութլըվա, Գյումըրվա): Տեղանունների սեռական և բացառական հոլովները ձևով նույնն են. Հոռոմու եմ գալում, Հոռոմու ախշիգ, Սօգըթլըվա եմ գալում, Սօգըթլըվա տընեբը և այլն: Բացառական հոլովը Շիրակի բարբառում, «Կր» ճյուղի բարբառների նման, ձևակերպվում է հիմնականում էն վերջավորությամբ. առկա են նաև ու, ուց):

Ածականների բաղդատական, գերադրական աստիճանները կազմվում են ինչպես համեմատելիի սեռական հոլովի, այնպես էլ ՔԱՆՑ, ԴԸՀԱ, ԿՄԱՎԵԼԻ բառերի օգնությամբ. իսի ախշիգը իդօրէն վենձ է, բանց իդիգ վենձ է, իդըհա վենձ է, Կալէլի վենձ է և այլն: Գերադրական աստիճանը կազմվում է ԲԻՏԹՈՒՆ, ՔՈՒԼԼԻ, ԲԻՐԱԴԻ, ՍԱՂ բառերի սեռական հոլովների օգնությամբ. վո՞վ շի իմանա օր մէր գէղը սաղից, (բուրֆէնցէն, բուրֆօնից, բիտթունէն, բիբադնօցէն) ճարուստ է: Ածականի գերադրական աստիճանի իմաստ է արտահայտվում և իջֆան ըսես բառակապակցությամբ. իսի մառթը իջֆան ըսես ճարուստ է: Հոգների կիրառությամբ, նրանց տեսակներով Շիրակի բարբառը չի տարբերվում հայերենի մյուս բարբառներից. միակ բնորոշն ու հատկանշականը այն է, որ Բայաղետի բարբառի նման, այստեղ ևս լայն տարածում ունի կրկնակի հոգի կիրառությունը. Փէսէնըն էգավ, ձիւնըն թիմաբի պրծա և այլն:

Շիրակի բարբառում գրաբարյան չորս լծորդությունների դիմաց առկա են ել և ալ-ը: Նկատելի են փոխանցումներ լծորդությունների մեջ. արածանել-արծալ, դովել -գօվալ, կաթել-կաթալ, ծիծաղել-ծիծղալ և այլն:

Շիրակի բարբառով խոսող գյուղերի խոսվածքները ըստ անկատար դերբայի վերջավորության հետևյալ պատկերն են ներկայացնում. գյուղերի ճնշող մեծամասնությունում այն ձևակերպվում է դերբայական ըմ, փոքր, աննշան մասում՝ ում, իսկ մնացածում՝ խառը կերպով՝ Ում և Ըմ վերջավորություններով: Միայն Ում դերբայական մասնիկ ունեն Գուսանագյուղ, Իսահայկան, Նոր կյանք, Բաշգյուղ, Մաղկաշէն գյուղերի խոսվածքները:

7 Այս և մնացած բոլոր դեպքերում Մարալիկի խոսվածքը ունի խուլ պայթականներ:

Ինչպես տեսնում ենք, մի քանի տասնյակի հասնող դուրերից միայն հինգ գյուղում է, որ անկատար դերբայն ունի Ում վերջավորությունը: Այստեղ նշենք այն հետաքրքրական փաստը, որ «Ում» ճյուղի բարբառներին բացարձակապես հատուկ ու բնորոշ է դերբայական ոչ թե Ում, այլ՝ Ըմ վերջավորությունը: Զուտ «Ում» ճյուղին պատկանող բարբառներում Ում վերջավորությունը իսպառ բացակայում է: Այն Արարատյան բարբառի խոսվածքներով խոսող բնակավայրեր ունեցող շրջաններից և ոչ մեկում չի հանդիպում: Հետաքրքրականն այն է, որ ռւմ կա մեկ Բայազետի, մեկ էլ՝ Շիրակի բարբառներում, որոնք երկուսն էլ, ինչպես տեսանք, թեև անկատար դերբայն ունենան, կազմվող ժամանակները ձևավորվում են Ում-ով, բայց հատկանիշների բացարձակ գերակշռությամբ՝ հարում են «Կը» ճյուղի բարբառներին:

Շիրակի գյուղերի խոսվածքների պատկերն ճշգրիտ դարձնելու համար, անհրաժեշտ է նշել, որ այստեղ առկա է նաև կը եղանակիչը: Թվում է, որ այն պետք է բացատրել Կարնո բարբառի Բասենի ենթաբարբառի ազդեցությամբ, որի հարևանությամբ ապրում են Շիրակի բարբառով խոսողները:

Անդրադառնալով հայ բարբառների դասակարգման հարցին, պրոֆ. Հր. Աճառյանը գրում է. «Իմ կարծիքով դասակարգության իբրև լավագույն հիմք կարող է ծառայել խոնարհման մեջ սահմանական ներկայի և անկատարի կազմության եղանակը, որին բարբառախտաբար զուգահեռվում է նաև ներգոյականի և երբեմն էլ բացառականի կազմության եղանակը»⁸: Նույնը նկատի ունենալով՝ պրոֆ. Ա. Աբրահամյանը գրել է. «Եվ իրոք, ժամանակակից գրական հայերենն ու այն բարբառներն, որոնք ունեն «Ում» մասնիկով անկատար դերբայ, ունեն նաև նույնպիսի մասնիկով կազմվող ներգոյական հոլով»⁹:

Այս հատկանիշը, որ իրոք բնորոշ է հայերենի՝ «Ում» ճյուղի բարբառներին բացակայում է Շիրակի ողջ բարբառում, թեև այստեղ ևս առկա է Ում մասնիկով անկատար դերբայը, բայց բոլորովին բացակայում է Ում-ով կազմված ներգոյական հոլովը: Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է բացառապես՝ սեռական հոլովով և մէջ (մէճ) ետադրությամբ: Այս երևույթը բացառիկ չէ. այդպիսին է պատկերը և Բայազետի բարբառում:

Այսպիսով, Շիրակի դաշտավայրում ամենատարածվածը նույնանուն բարբառն է, որը հայերենի մյուս բարբառներից տարբերվում է նրանով, ավելի շուտ՝ նաև նրանով, որ ունենալով Ում դերբայական մասնիկը՝ հիմնականում, իր մնացած բոլոր հատկանիշներով հարում է «Կը» ճյուղի բարբառներին:

ՆՅՈՒԹԵՐ ՇԻՐԱԿԻ ԲԱՐԲԱՌՈՎ

Հոռոմ գյուղի խոսվածքով

(Արթիկի շրջան)

Հին ժամանադր. Կ'էշմիաճընա մէր հայոց Թաքավորը, մէր կաթողուգոսը էրթըմ է ոռւսաց Թաքավորին ղօնախ: Թաքավորին օր էրթըմ է ղօնախ, Թաքավորը դ'է բ'ավագանին մառթիք է Թոփ էնըմ, սինոդ է Թոփ էնըմ, ըսկըսմ էն իրանց հըմար քեֆ էնելը, ուղել-խըմելը: Անցնըմ է ժամանագ, սէղանը օր վէռչացընըմ են, Խըրիմյան հայրիգը հարց է տալըմ Թաքավորին, հարցընըմ է. Թէ մառթըկանց ուսումըն է պետք գ'ալըմ, Թէ՞ իրանց սեփական խելքը:

⁸ «Հայոց լեզվի պատմություն», 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 327:

⁹ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայներն ու նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 87:

Թաթավորը ռսրս՝ է.

— Ի՞նչ խելք, ի՞նչ՝ ք՛ան, մենք էն տէսաղ մէ անասուն կաղում ունինք, օր, մէղի սէղան է ք՛անում, սէղան է պաղտաստում, ճաշ է ք՛էքում, շալ է ք՛էրում, վէռլապէս, մենք սօվըրցըրել ենք լինդրան.

— Հա՞, ուրեմն սօվըրցրածն ու ուսումը ձ՛էղի հըմա սօվըրցրածն է լա՛վ:

— Հա,— ռսրս է Թաթավորը:

— Ի՛չ շատ լավ:

Խորիմյան հայրիգը դ՛իշերը քրնում է. մըղածում է: Առավոդը լուսը օր ք՛ացվում է, էրթիմ է քաղարի միշից մէ մուգում է ճարքս՝ էլի, փօղում է, ինչում է մէ մուգում է ճարքս, ք՛ըռնում դ՛ըռնում է Խ՛իրա Թուֆնի՝ դուրդի մէլը, դ՛ըռնում է ծոցը ու էլի գ՛ալում է, նըստում է սէղանին, ըսկըսում էն էլի ուղել-խմել, քեֆ էնելու: Էն անասունը, էն սօվըրցրած կաղուն ժողովուրթին շալ է ք՛ածնում, ճաշ է ք՛ածնում, Թարաղներով, շանչէրով ք՛ոնում, տալում է ամէն մառթու: Խորիմյան հայրիգը քեֆի էդ տրժ մամտնադք, ըրօրադան, ծօցիցը հանում է Թուֆնի դուրդը, միչէն հանում է մուգը, ք՛աց է Թողնում: Մուգը օր ք՛աց է Թողնում, կաղուն էղած-չէղած, ստաքան, Թարաղ, Թարլում է ու սեղնի վրէլէն Թոռնում է, էդ մուգը ք՛ըռնում է. օր բոռնում է, Խորիմյան հայրիգը ծափ է գարնում, ըսրս՝ է.

— Ան,— ռսրս է,— քու սօվըրցրած կաղուն: Յուսումը հէլ, Թանդադինը մարթըկանց խելքն է:

Նոռ կյանք գյուղի խոսվածքով

(Արթիկի շրջան)

Մէր դ՛էղադիքը հավալ էղել էն Դըղըր: Մէ ժամանաղում հօն էն մընացէ, հէղեմ էղել էն հօս: Մէ բանիմ Թախում էլ դ՛ընացել էն Ղալթախի, էրթում եմ Ղալթախի, հանդիքում էմ, մընում եմ օրօվ-լըդու օրօվ, էլի գ՛ալում եմ իմ առնը: Տըղա ունիմ, աղչիդ ունիմ, ասսուն փառք, դ՛ալում են, աւր էն էղնում, ռսրս են. էրթանք մէր քօվը: Յես լեմ երթում. իմ տեղը հըմի էս քարերու մէլըն է:

Ախչիգըս դէղի մէլըն է, հաց է Թըխում, դրդում է: Քուլօնցէն շաղ էմ աշխաղէ, ընծէն շատ աշխօր էնօղ չի էղէ, Խ՛նչ էնեմ, աստված էլ ընծի էդ է փալ տըվէ, յես իմ ասսանէն դ՛օլ էմ, մէ մալրս տա, դինչընամ: Իմ դ՛րրօղցնէրն էլ լավ էն աշում ընծի:

Մովսիսյան Պետրոս Հակոբի
(74 տարեկան)

Նեախիքի կլու գյուղի խոսվածքով

(Հոկտեմբերյանի շրջան)

Յէս ձ՛էր դ՛ալուն ընդու հըմա վախէցա, աղղըվա, դ՛ուռը խէշած էր, Թէ չէ մառթ դ՛ալում ա, ք՛արով դ՛ա, մէնք ղօնաղից չէնք վախէնում:

Գ՛աղթին օր ըսրս էն, էղման էղանք ընդանք էս ձ՛օնրի մէլըն, ըսրս ինք մալ, օխար կըպալէնք: Ըսրս էն, Թախալարից էս դ՛ալում, հա՞, ընդօնք քյուլլի մեր Բաղրանցիք էն, հարէաննեք ինք Բաղրան: Ըստէղ մենծ մառը չկա, մէ յէս էմ: Թախալար կա իմ Թալ մառթ: Մէնք մէ լիղու էնք խոսում: Մէր լիղուն ըսման է, էլ չէնք փոխէ: Մէ վօխտ էլի մառթ էղավ, լիղվներեն էր դ՛ըրում, չիղէմ ճանչընում էս: Հալ լիղվընէրը շոդ-շոդ ա: Մէնք ցանի գէղ էնք ըսրս, սօղըթլըվեցիք ամբօց էն ըսրս:

Մէնք ինչլիս սօրվեր էնք, էն լիղու էլ խոսում էնք: Մէր քօվը Նախչիվան կար, դեղ, էնի սամ-սեմ իրուչ լիղու էր խոսում:

Մէնք քուլլի մըղա՛ան էնք էրե: Թուրքը էման պըղո՞ղ էր, օր մէղի օր տար:

Շաքոյան Սմբատ Թաքոսի

(72 տարեկան)

ДИАЛЕКТНОЕ ОПИСАНИЕ ШИРАКСКОЙ ДОЛИНЫ

С. А. БАГДАСАРЯН-ТАПАЛЦЯН

Резюме

Ширакская равнина Советской Армении весьма интересна по своему диалектному облику. В этой равнине население говорит на многих диалектах, из коих некоторые до сих пор не являлись предметом исследования.

Побывали в пяти районах с более чем 130-ю населенными пунктами данной равнины. В статье дается общее диалектное описание этой равнины и вкратце характеризуется ширакский диалект—один из неизвестных, но самых распространенных диалектов не только в Шираке, но и в некоторых населенных пунктах Октемберянского и Таллинского районов.

Ширакский диалект относится к диалектам ветви «*пид*», «*рид*» армянского языка с преобладанием признаков ветви «*лр*». Этот диалект имеет подчеркнутую четырехстепенную систему согласных.

Глухие взрывные в начале слова не изменяются, а в середине и в конце закономерно озвончаются.

Глухие придыхательные звуки везде остаются без изменений, только в одноименном центре Мараликского района вместо них имеются глухие взрывные в середине и в конце слова.

Гласные звуки, в сравнении с грабаром, изменяются редко.

Настоящее и прошедшее времена изъявительного наклонения образуются с помощью частицы «*пид*», «*рид*» как в диалектах ветви «*пид*».

Исходный падеж в основном образуется при помощи частицы —*те*, встречаются и —*ш*, —*п*, —*пг*, как в диалектах ветви «*лр*».

Местный падеж образуется с помощью родительного падежа плюс послелог «*лхг*».

Диалект очень богат суффиксами множественного числа. Нередко в одном и том же слове соединяются одновременно несколько таких суффиксов. Словарный состав ширакского диалекта во многом сходится с басенским диалектом ветви «*лр*».